



ԵՐԿՈՒԵԱԹԻ, 24 ՄԱՐՏ, 2014

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորիել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 34

ԳՈՂՈՒԹԻԻԷՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

**Ա**նդադար Տէրը պիտի օրհնաբանեմ. անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ:  
 Եւ Տիրոջս դիմեցի, եւ աղօթիս պատասխանեց,  
 զիս ազատեց բոլոր վախերէս:  
 Տիրոջ մօտեցէ՛ք, որպէսզի ուրախութեամբ նստագայթէ՛ք,  
 եւ յուսախար չէ՛ք ըլլար բնաւ:  
 Տիրոջ հրեշտակը աստուածավախ մարդոց կողմին պահակ կը կանգնի,  
 եւ փորձանքներէն զանոնք կ'ազատէ:  
 Տիրոջ աչքերը արդարներուն վրայ կը հսկեն,  
 ականջները միշտ պատրաստ են անոնց աղաչանքը լսելու:  
 Երբ արդարը օգնութիւն կ'աղաղակէ՝ Տէրը կը լսէ,  
 եւ զայն կ'ազատէ իր բոլոր նեղութիւններէն:  
 Տէրը պատրաստ է սրտաբեկներուն օգնելու,  
 փրկելու յուսալուծ հոգիները:  
 Արդարին նեղութիւնները որքան ալ շատ ըլլան,  
 Տէրը կ'ազատէ բոլորէն ալ, եւ զայն անվնաս կը պահէ,  
 թոյլ չտալով որ մէկ ոսկորն իսկ փշրուի:  
 Տէրը կը փրկէ իրեն ծառայողները.  
 դատապարտութիւն պիտի չունենան անոնք՝ որոնք իրեն կ'ապաւինին:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
 Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:  
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղերոց:  
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
 Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

**Պ**ահապան ամենայնի Քրիստոս,  
 աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

**ՅՈՎԱԷՓ ԵՒ ԻՐ ԵՂՔԱՅՐՆԵՐԸ (37:1-11)**

Պարմութեան ընթացքը կ'անցնի Յակոբէն Յովսէփին:

Այս հարուածէն սկսեալ մինչեւ Ծննդոց գիրքի աւարտը հեղափոխականօրէն մեզի կը ներկայացնէ Յովսէփին կեանքը: Յովսէփի մանկութեան մասին տեղեկութիւններ չկան Աստուածաշունչին մէջ: Ինչ որ կը պարմուի 17 տարեկանէն սկսեալ: Այս հարուածը նաեւ ցոյց կու տայ Յակոբի սերը հանդէպ Յովսէփին, որովհետեւ «իր ծերութեանը որդին էր անիկա»: Յակոբ այդ սերը կ'արտայայտէ նուիրելով անոր «բազմագոյն պարմուճան»: Յակոբ իր այս արարքովը կ'ուզէ յարուկ դիրք մը տալ Յովսէփին, որպէս պարասխանապու իր եղբայրներուն: Այս երեւոյթը սակայն ոչ թէ հաճելի պիտի չըլլար իր եղբայրներուն համար, այլ անոնք նոյնիսկ պիտի արեւին զինքը:

Հեղափոխական է բացատրութիւնը «իր ծերութեան որդին էր անիկա»: Բայց մենք զիտենք, որ Յովսէփէն յետոյ ալ Յակոբ եւս զաւակ մը ունեցաւ Բենիամինը, բայց այստեղ կը նշանակէ Յովսէփի նկատմամբ ունեցած սերը երկնային շնորհքի մը արտայայտութիւնն էր: Իսկ գալով «բազմագոյն պարմուճան» տալուն, Եկեղեցական հայրերը անոր մէջ տեսած են նախապարկերացումը, գալիք ճշմարտութեան որ Քրիստոսով իր լրումը պիտի գտնէր: Այսինքն՝ ինչպէս Յովսէփ հորը սիրելին էր, նոյնպէս ալ Քրիստոս երկնաւոր Հօր սիրելին է. «Դա է որդի իմ սիրելի»: Այնպէս ինչպէս Յովսէփ բազմագոյն պարմուճան սրացաւ հորմէն, նոյնպէս ալ Քրիստոս բազմագոյն շնորհներով: Այնպէս ինչպէս Յովսէփի եղբայրները կը նախանձէին իրեն, նոյնպէս ալ Քրիստոսի պարագային Օրէնքի ուսուցիչներն ու փարիսէցիները պիտի չհանդուրժէին, այլ՝ նախանձով պիտի լեցուէին, մինչեւ սպաննութիւն:

Տակաւին, Յովսէփի եղբայրներուն նախանձը պիտի աւելնար անոր ունեցած երկու տեսիլքներէն յետոյ, որովհետեւ անոնք այդ տեսիլքներուն մէջէն պիտի հասկնէին թէ իրապէս Յովսէփ պիտի ունենայ դիրք մը, որուն պիտի զան եւ երկրպագութիւն ընեն, բան մը որ երբեք ալ պիտի չընդունէին: Նոյն այն վիճակը ինչ որ յառաջիկային նաեւ պիտի պարահէր Քրիստոսի երկրաւոր կեանքի ընթացքին: Այս տեսիլքներէն յետոյ, «եղբայրները նախանձեցան անոր, բայց հայրը իր միտքը պահեց այս խօսքերը», այնպէս ինչպէս «Մարիամ այն ամէն բաները կը պահէր ու իր սիրտին մէջ կը մտածէր» (Ղուկաս 2:19): Այս բացատրութիւնը կը նշանակէ, որ այդ խօսքերուն մէջէն Յակոբ կը հասկնար Աստուծոյ նախախնամութիւնը, եւ աստուածային յայրնութիւն մըն է որ կը տրուի եւ ոչ թէ անձնական ցանկութիւն մը:

**ՅՈՎԱԷՓ ԿՐ ԾԱԽՈՒԻ ԵՒ ԿՐ ՏԱՐՈՒԻ ԵԳԻՊՏՈՍ (37:12-36)**

Յակոբ Յովսէփը կը դրկէ որպէսզի երթայ եւ նայի թէ իր եղբայրները իրենց հորը հօքը որպէսզի կ'արածեն: Անոնք պարասխանապու էին իրենց հորը հօքին, եւ պէտք էր որ արածէին այնպէս ինչպէս որ թելադրուած էր: Բայց հարուածը կու գայ ցոյց տալու, թէ անոնք հնազանդ չէին իրենց տրուած պարտութիւն: Միւս կողմէ, Յակոբ ինք մտաւորօրէն Յովսէփը կը դրկէ որպէսզի ստուգէ թէ անոնք ու հօքերը ողջ են: Մէկ այլ ուրիշ նախապարաստական դէպք մըն է ասիկա կատարած Քրիստոսի աշխարհի գալուն եւ տեսնելու անկեալ մարդուն վիճակը: Բայց Անոր աշխարհը գալը շար հաճելի պիտի չըլլար, ինչպէս հաճելի չեղաւ նաեւ Յովսէփին գալը եղբայրներուն, որուն համար ալ պիտի ըսեն. «**Ահա այն երազ տեսնողը կու գայ, եկէք մեռցնենք զանիկա ու գուրի մէջ նետենք, եւ տեսնենք թէ անոր երազները ինչ պիտի ըլլան**»: Ինչ որ նոյն արտայայտութիւնը պիտի ունենային Օրէնքի ուսուցիչներն ու փարիսէցիները Յիսուսը սպաննելու ծրագրին, եւ որմէ յետոյ խաչին վրայ ըսելու. «Աստուծոյ վստահեցաւ, թող ազատէ զինք» (Մարտոն 27:42-43):